ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՄԱԿՅՈՒԹՅՈՒՆ»
ԽՄԲԱԿՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Ս. ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մկրտչյան.

Ի պատասխան Ձեր՝ 10.10.2017թ. հ.36/37 գրության՝ Երևանում զբոսաշրջության ոլորտի բարեփոխումների աշխատանքների ընթացքի և նախատեսվող ծրագրերի վերաբերյալ, Ձեզ է ներկայացվում Երևանում զբոսաշրջության զարգացման նպատակով քաղաքապետարանի աշխատակազմի տուրիզմի բաժնի գործունեության մասին տեղեկատվությունը:

Առդիր՝ «4» թերթ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՈՒՐԻԶՄԻ ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանը՝ լինելով զբոսաշրջության համար գրավիչ պատմամշակութային քաղաք, միջազգային շուկային բազմաբնույթ մրցունակ զբոսաշրջային արդյունք և բարձրակարգ ծառայություններ առաջարկելու մեծ ներուժ ունի:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տուրիզմի բաժինը կազմակերպում և ապահովում է զբոսաշրջության զարգացման ծրագրերի և միջոցառումների պլանների մշակումը: Բաժինը հիմնվել է 2011 թվականին Զարգացման և ներդրումային վարչության կազմում՝ որպես տուրիզմի զարգացման ծրագրերի բաժին, այնուհետև ընդգրկվել Մշակույթի և տուրիզմի վարչության կազմում, իսկ 2017թ. հունիսին Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի N 16-Ա որոշմամբ դարձել է առանձին ստորաբաժանում:

Մայրաքաղաքում քաղաքային զբոսաշրջությունը զարգացնելու նպատակով տուրիզմի բաժինն իրականացնում է գործունեություն հետևյալ ուղղություններով՝

- Երևանը՝ որպես զբոսաշրջային արդյունք հանրահռչակելն ու ներկայացնելը,
- Երևան այցելող զբոսաշրջիկներին տեղեկատվական աջակցության տրամադրում,
- Մայրաքաղաքում իրադարձային /միջոցառումային/ զբոսաշրջության զարգացում,
- Երևանում զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում,
- Միջազգային և միջտարածաշրջանային համագործակցության զարգացում Երևանի քույր ու գործընկեր քաղաքների հետ զբոսաշրջության ոլորտում:

Մայրաքաղաքում զբոսաշրջային դրական մթնոլորտի ստեղծման համար տուրիզմի բաժինն իրականցնում է բազմաբնույթ ծրագրեր և միջոցառումներ զբոսաշրջիկների, համաքաղաքացիների, զբոսաշրջության ոլորտի ուսանողների

համար: Պարբերաբար իրականացվում են աշխատանքներ զբոսաշրջային քաղաքային երթուղիների մշակման ուղղությամբ, սեմինարների և տարաբնույթ դասընթացների կազմակերպում:

Քաղաքային զբոսաշրջությունը զարգացնելու նպատակով տուրիզմի բաժինն իրականացնում է աշխատանքներ ուղղված մարքեթինգային քաղաքականությանը, որը ներառում է Երևանի՝ համաշխարհային շուկայում ճանաչելիության բարձրացմանը, պատշաճ ներկայացմանը ու խթանմանը ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան զանազան ամսագրերում և թերթերում, սոցիալական ցանցերի, էլեկտրոնային մարքեթինգի և այլ հասարակության հետ կապերի միջոցներով:

Կարևոր ուղղությունից է նաև միջոցառումային զբոսաշրջությանն ուղղված ծրագրերի իրականացումը: Միջոցառումային զբոսաշրջությունը զարգացնելու նպատակով բաժնի կողմից ամեն տարի իրականացվում են արդեն ավանդական դարձած **«Համով-հոտով Երևան», «Երևան ՏԱՐԱԶԲԵՍՏ», Երևանի գարեջրի փառատոները:**

Երևան քաղաքի զբոսաշրջային դիրքավորման ամրապնդմանն ուղղված քայլերից կարևորվում է Երևանի 2800-ամյակին նվիրված բազմաբնույթ միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը:

Զբոսաշրջության ոլորտում զուգահեռ իրականացվում են ենթակառուցվածքների բարելավման աշխատանքներ, ծառայությունների և հետազոտությունների ավելի ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիաներ: Զբոսաշրջային ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերում մասնավոր ներդրողների գրավելու նպատակով մշակվել են ներդրումային փաթեթ-առաջարկներ /«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան, Շենգավիթ հնավայր, Կարմիր բլուր հնավայր/: Նախատեսվում է նաև արդիականցնել և զարգացնել **«Երևան Սիթի Տուր»** քաղաքային զբոսաշրջային պաշտոնական ծրագիրը՝ ավելացնելով օտար լեզուների քանակը:

Բաժինն ամենօրյա տեղեկատվություն է տրամադրում տուրիզմի բաժին դիմող զբոսաշրջիկներին, տպագրում և զբոսաշրջային կազմակերպություններին, հյուրանոցներին, թանգարաններին է տրամադրում երկլեզու **զբոսաշրջային քարտեզներ:** Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքի «միջոցառումների օրացույց» բաժնի միջոցով ներկայացվում է մայրաքաղաքում կազմակերպվող մարզական, մշակութային և զբոսաշրջային միջոցառումները:

Երևանի մասին տեղեկատվությունը առավել հասանելի դարձնելու նպատակով ՀԲԸՄ հետ համատեղ մշակվել է «Բացահայտենք Երևան. Հայացք քաղաքի անցյալին և ներկային» զբոսաշրջային էլեկտրոնային գիրքը:

Ընթացքի մեջ է զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի հիմնումը, որը զբոսաշրջիկներին կտրամադրի անհրաժեշտ տեղեկատվություն ճանապարհորդության տարբեր հարցերի, երթուղու, զբոսաշրջավայրերի վերաբերյալ և այլն: Տեղեկատվական կենտրոնի ստեղծումը կնպաստի Երևան այցելած զբոսաշրջիկների իրազեկման մակարդակի բարձրացմանն ու ինքնակողմնորոշմանը:

Քաղաքային զբոսաշրջության զարգացման ուղղությամբ տարվում են աշխատանքներ ստեղծելու բազմալեզու հանրամատչելի կայք, որտեղ այցելուները կարող են գտնել հավաստի տեղեկատվություն մայրաքաղաքի պատմության, գործող զբոսաշրջային ծառայությունների վերաբերյալ: Շարունակական բնույթ են կրում Երևանի վերաբերյալ տեղեկատվական նյութերի պատրաստումը /թռուցիկներ, քարտեզներ, էլեկտրոնային կրիչներով Երևանը ներկայացնող նյութեր/ ինչպես հայերեն, այնպես էլ բոլոր այն լեզուներով, որոնք օգտակար կլինեն թիրախային լսարանի համար:

Բաժինը, համագործակցելով Երևանի տարածքում գործող զբոսաշրջային գործակալությունների, հյուրանոցների և հյուրանոցային հանգրվանների հետ, նախապատրաստում և ներկայացնում է առաջարկներ՝ Երևանում զբոսաշրջության քաղաքականություն մշակելու, համատեղ ծրագրեր իրագործելու, ներդաշնակ և օրենսդրության պահանջներին համապատասխանող գործունեություն ծավալելու, ինչպես նաև Երևանի քաղաքային ենթակայության զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող օբյեկտներ կառուցելու, հանգստի գոտիներ ստեղծելու, պահպանելու և շահագործելու վերաբերյալ:

Միջազգային և միջտարածաշրջանային համագործակցությունը զարգացման նպատակով Երևանը ներկայացվում է տարբեր երկրներում միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին և ֆորումներին /Վրաստան-18-րդ Կովկասյան զբոսաշրջային ցուցահանդես, Չինաստան-Քաղաքապետերի 5-րդ միջազգային զբոսաշրջային ֆորում/: Փորձի փոխանակման նպատակով համագործակցության ծրագրեր են իրականացվում Երևանի մի շարք քույր ու գործընկեր քաղաքների հետ ինչպիսիք են Սանկտ Պետերբուրգը, Մոսկվան, Լիոնը, Փարիզը, Մարսելը, Իլ դե Ֆրանսը և այլն: Մայրաքաղաքի զբոսաշրջային գրավչությունը բարձրացնելու նպատակով

պարբերաբար իրականացվում է նաև սոցիալական գովազդի փոխանակում /Սանկտ Պետերբուրգ և Օդեսա քաղաքների հետ 2017թ./:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Տուրիզմի բաժինը մշտապես կարևորում է մայրաքաղաքում զբոսաշրջության արդյունավետ կազմակերպումն ու կայուն զարգացումը և պատրաստակամ է համագործակցել տարբեր շահագրգիռ կազմակերպությունների հետ՝ մշակելով ու առաջարկելով նոր լուծումներ և ծրագրեր: